

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1334-Ն և
Հայաստանի Հանրապետության կառավարության
2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1509-Ն
որոշումների մեջ փոփոխություններ կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » ----- 20 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1334-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ
1509-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուբդորթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1334-Ն որոշման՝
 - 1) 2-րդ մասի «համապատասխան» բառից հետո լրացնել «՝ իրավասու մարմնի կողմից թարգմանչի հետ կնքված պայմանագրի հիման վրա» բառերը.
 - 2) 3-րդ մասի «2019 թվականի մարտի 1-ին» բառերը փոխարինել «2020 թվականի փետրվարի 1-ին» բառերով:
2. «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1509-Ն որոշման 3-րդ մասի «սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 2020 թվականի փետրվարի 1-ը» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: